РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
<<ՀԱՅԱՆՏԱՌ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF AGRICULTURE
"HAYANTAR"
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

0047, Երևան-47, Ա.Արմենակյան 129

Հեռ. 65-17-38, 65-02-35

23.06.14/2 N 01-09/59

Ձեր _____

ՀՀ Գյուղատնտեսության նախարար
Պարոն Սերգո Կարապետյանին

Մեծարգո պարոն նախարար

Ներկայացնում եմ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 2013թ. հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ –ի կողմից իրականացրած աուդիտի վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացության և ֆինանսական հաշվետվությունների կրկնօրինակները:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ Գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքում հրապարակելու համար:

Առդիր վեց թերթ:

Մ.Մաթևոսյան

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ»ՍՊԸ

ՀՀ , ք Երևան
Նուբարաշեն, 10 փող, տուն 6 Հեռ: 57 28 42
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյանի պողոտա 5/1
Աուդիտորական գործունեության լիցենզիա թիվ ԱԾ N 048 առ 02.08.2006թ.
տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից՝ անժամկետ

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայանտառ» ՊՈԱԿ 2013թ. դեկտեմբերի 31-ին հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է «Հայանտառ » ՊՈԱԿ հիմնադրին

Մեր կողմից իրականացվել է «Հայանտառ» ՊՈԱԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Կազմակերպության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:
Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 5-ում, Կազմակերպությունը ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի թիվ 1054-Ն (փոփոխություն ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 10-ի թիվ 307-Ն որոշմամբ) «Հայանտառ» ՊՓԲԸ դուստր ընկերությունների կանոնադրական կապիտալում ներդրումների օտարումից անշարժ գույքի տեսքով ստացել է հատուցումներ, իսկ դուստր ընկերությունների լուծարման կապակցությամբ՝ նաև գույք: Ստացված հիմնական միջոցները չեն չափվել իրական արժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 18 «Հասույթ» ստանդարտների:Նշված անհամապատասխանության ազդեցությունը 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունում արտացոլված հիմնական միջոցների հաշվեկշռային

արժեքի, տարվա շահույթի, հարկերի և չբաշխված շահույթի վրա չի որոշվել:

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 5-ում, Կազմակերպությունը 2012թ. ավարտվող տարվա ընթացքում չի իրականացրել հիմնական միջոցների գործառնական արդյունավետության վերանայում, ինչպես պահանջվում է ՀՀՍՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտով և Կազմակերպության հիմնական միջոցների ֆինանսական հաշվառման նպատակով կիրառել է հարկային հաշվառման մեթոդաբանությամբ սահմանված կանոններ, սկզբունքներ, հիմունքներ: Նշված անհամապատասխանության առկայության ազդեցությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հիմնական միջոցների, ակտիվներին վերաբերող շնորհների հաշվեկշռային արժեքների, մաշվածության գծով ծախսի և չբաշված շահույթի վրա չի որոշվել:

Ձևափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ կարծիքի ձևափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրած հարցերի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հայանտառ» ՊՈԱԿ ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

ք. Երևան
13 հունիսի 2014թ

Տնօրեն Մելս Պետրոսյան

Աուդիտոր Արփինե Արաբյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Հայանտառ> ՊՈԱԿ

2013թ դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Ծանոթ	2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	676,433	661,093
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	5	21,533	22,033
Ոչ նյութական ակտիվներ	6	41,633	40,319
Ներդրումներ դուստր Կազմակերպություններում	7	-	-
Հետաձգված հարկային ակտիվներ	21	19,075	17,868
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		758,674	741,313
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	69,309	64,763
Կենսաբանական ակտիվներ	9	255,896	256,061
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	33,737	28,584
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով		4,718	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	79,755	225,242
Այլ ընթացիկ ակտիվներ		539	146
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**443,954**	**574,796**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		1,202,628	1,316,109
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Հիմնադրի ներդրումներ		135,702	135,702
Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)		336,748	380,210
Ընդամենը սեփական կապիտալ		**472,450**	**515,912**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	667,471	637,844
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**667,471**	**637,844**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	42,333	138,068
Շահութահարկի գծով պարտավորություններ		-	7,048
Պահուստներ	14	20,374	17,237
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**62,707**	**162,353**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		1,202,628	1,316,109

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են <Հայանտառ> ՊՈԱԿ-ն ղեկավարության կողմից 2014թ. հունիսի 10-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ, էջ 8-38:

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Մ. Մաթևոսյան

Ռ. Փաշիկյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Հայանտառ> ՊՈԱԿ

2013թ դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	ծանոթ	31.12.2013թ ավարտված տարի	31.12.2012թ ավարտված տարի
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	15	537,751	481,573
Վաճառքի ինքնարժեք	15	(481,925)	(300,856)
Համախառն շահույթ (վնաս)		55,826	180,717
Իրացման ծախսեր	16	(335)	(422)
Վարչական ծախսեր	17	(455,408)	(430,126)
Այլ եկամուտ	18	1,024,321	1,115,836
Այլ ծախսեր	18	(649,893)	(594,372)
Այլ օգուտներ և կորուստներ	19	(3,183)	(559)
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		(28,672)	271,074
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	20	(14,790)	(18,870)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		(43,462)	252,204
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		(43,462)	252,204

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ, էջ 8-38:

Տնօրեն
Մ. Մաթևոսյան

Գլխավոր հաշվապահ
Ռ. Փաշիկյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Հայանտառ> ՊՈԱԿ

2013թ դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Հիմնադրի ներդրումներ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
2012թ հունվարի 1-ի դրությամբ	**135,702**	**128,006**	**263,708**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	252,204	252,204
2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**135,702**	**380,210**	**515,912**
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		(43,462)	(43,462)
2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**135,702**	**336,748**	**472,450**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ, էջ 8-38:

Տնօրեն
Մ. Մաթևոսյան

Գլխավոր հաշվապահ
Ռ. Փաշիկյան

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Հայանտառ> ՊՈԱԿ

2013թ դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	2013թ	2012թ
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	225,242	97,940
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	630,456	592,168
Շնորհի ստացված դրամական միջոցներ	734,478	860,206
Այլ մուտքեր	1,306	2,909
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(1,120,396)	(828,067)
Պաշարների ձեռք բերում	(127,171)	(100,861)
Ծառայությունների դիմաց վճարումներ	(96,306)	(101,360)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ՝ բացառությամբ շահութահարկի	(128,405)	(282,419)
Վճարված շահութահարկ	(27,764)	(5,065)
Այլ վճարումներ	(15,421)	(12,779)
Ստացված տոկոսներ	3,528	2,710
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(145,695)**	**127,442**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(145,695)**	**127,442**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**208**	**(140)**
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**79,755**	**225,242**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ, էջ 8-38:

Տնօրեն
Մ. Մաթևոսյան

Գլխավոր հաշվապահ
Ռ. Փաշիկյան